ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Լոռի Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Լոռի Բերդ	Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. արտահերթ նիստ	15.07.2025թ.	12:00	**Լոռի Բերդ համայնքապետարան** (գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ փողոց, շենք 7)

ՆԱԽԱԳԻԾ 1

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 15-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու
2025թ. հուլիսի 15-ի № -Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 15-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում փոփոխություններ կատարելու մասին:

4) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 20-ի թիվ 6-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 73-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ
ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. *Արայիկ Ներսիսյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Լոռու մաարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը:

ՆԱԽԱԳԻԾ 3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԻ
ՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. *Մարգարիտա Հովսեփյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ և 42-րդ կետերով և 77-րդ հոդվածի 3-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում կատարել փոփոխություններ համաձայն՝ հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Անի Մարտիրոսյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի

հունվարի 20-ի թիվ 6-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի օգոստոսի 01-ից:

ՆԱԽԱԳԻԾ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ԹԻՎ 73-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Անի Մարտիրոսյան*

Ղեկավարվելով «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով.

հանձնաժողովի նախագահ՝

1) Պապիկյան Վահրամ Ռոմիկի – Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

հանձնաժողովի քարտուղար՝

2) Շահնազարյան Թամարա Էդիկի - ավագանու անդամ

հանձնաժողովի անդամներ՝

3) Շահինյան Շուշանիկ Արմենի – աշխատակազմի առաջատար մասնագետի ժ/պ, սոցիալական աշխատող

4) Մարգարյան Սիլվա Ստեփանի - ավագանու անդամ.

5) Ասրյան Աննա Տիգրանի - ավագանու անդամ

6) Մաթևոսյան Հասմիկ Գառնիկի–Ստեփանավանի ՄՍԾՏԿ-ի սոցիալական աշխատանքի և զբաղվածության բաժնի ավագ սոցիալական աշխատող

7) Ղարաջյան Գրիշա Մուրադի – ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ստեփանավանի բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան

8) Ղազարյան Անի Արամի - Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ

9) Հասմիկ Արարատի Բարխուդարյան - «Լոռի Բերդ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. դեկտեմբերի 05-ի թիվ 73-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: